

Հ Ա Պ Ն

39 (47925)

MAR 2014

II  
- 07

դեկրետներ և  
սրբազաններ հայաստան  
1923թ

№ 1 - 10

2-րդ օրվանց շրջան

00 APR 2016

Հ. Ս. Խ. Հ.

# ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ԶԵՎ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ

## Հ Ա Վ Ա Ք Ա Ծ Ս Ի

1923

ՓԵՏՐՎԱՐ 28

№ 2

### Ց Ա Ն Կ

- 11. Բժշկա—սանիտարական աշխատավորների հանրակազմի մասին:
- 12. Զինարկությունների մեջ պատանիների նվազագույն քանակություն սահմանելու մասին:
- 13. Պատանի բանվորներին բժշկական քննության յենթարկելու մասին:
- 14. 1900 թ. ի ծնունդ կարմիր բանակայիններին արձակուրդ տալու մասին:
- 15. Շոգեկլախասների, ջրային և ներքին աշրկյունն ունեցող շարժիչների և ճնշման տակ գործող անոթների տերերից հարկ գանձելու մասին:
- 16. Հաշտարար առյանների և միջնորդ դատարանների մասին:
- 17. Աշխատանքի Որենսդրքի կիրարկության մասին:
- 18. Հայաստանի սովյալների ոգնության կենտրոնական Հանձնաժողովի կանոնադրություն:
- 19. Բոլոր արդելատները Ներքին Գործերի ժողովրդական կոմիսարիատի տեսչության տակ կենտրոնացնելու մասին:
- 20. Աշխատանքի վերաբերյալ որենքները տաննաշխատող բանվորների վրա տարածելու մասին:
- 21. Գույքի պետական սպահովադրության մասին:
- 22. Պարտադիր զինվորադրության մասին:

**Դ Ե Կ Ր Ե Տ**

**Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

№ 11. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ. ԲԺԻՇԿ ՈՐԿԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԳԹՈՒԹՅԱՆ ԲՈՒՅՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՐԱԿՈՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ 1921 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28 Ի ԴԵԿՐԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1923 թ. Հունվարի 16

Ի փոփոխութիւնն և ի լրումն գեղազործների, բժիշկ ոգնահանների, գթութեան քույրերի ցուցակագրութեան և աշխատակոչի վերաբերյալ 1921 թ. Սեպտեմբերի 28-ի գեկրեաի՝ Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը վերոշեց.

1. Վերացնել ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վերոհիշյալ գեկրեաի այն մասը, վոր վերաբերում է բժշկութեան աշխատավորների աշխատանքի հանրակոչին և այդ հանրակոչի հիման վրա պետական ծառայութեան մեջ գտնվող բժշկութեան բոլոր աշխատավորներին ազատել հանրակոչից:

2. Բժշկութեան աշխատավորներին աշխատանքից ազատվելը կատարվում է իրենց գիմումի համաձայն, Աշխատանքի Որենքագրքով սահմանված ժամանակին և կարգով. բայց Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատին իրավունք՝ և վերապահվում ծառայութեան մեջ պահելու բժշկութեան այն աշխատավորներին, վոր Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատի հիմնարկութեան պաշտպանութեան կազմի մեջ են; վոր ավելի քան յերեք ամիս ժամանակով, հաշվելով այն օրից, յերբ նրանք գիմելուկին են իրենց ծառայութեանից ազատելու մասին:

Բացառիկ դեպքերում՝ այդ ժամանակ կարելի չէ ավելացնել մինչև 6 ամիս:

3. Սույն գեկրեաը չի տարածվում գինվորական սանիտարական ծառայութեան մեջ գտնվող բժշկութեան աշխատավորների վրա:

4. Առողջապահութեան Ժողովրդական Կոմիսարիատին իրավունք և վերապահվում՝ աշխատանքի կոչելու բժշկութեան աշխատավորներ:

բին, ամբողջ Հ. Ա. Խ. Հ. Հանրապետութիւնը կա՛մ նրա մի մասը համաձայնակի յենթակա հայտարարելու գնալքում:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՝ Նախագահի տեղակալ՝ Ս. Մաավյան

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի քարտուղար՝ Գ. Պարզյան

Հը «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 1, № 22

**Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

**Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

№ 12. ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԲԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1923 թ. Դեկտեմբերի 27

1. Ի նկատի ունենալով, վոր զանազան ձեռնարկութիւնների մեջ շատերը կրճատելիս պատանիների քանակութեան անհամաչափ նվազումն և տեղի ունենում, վոր կարող է վատնազավոր լինել վորակյալ բանվորական ուժը վերականգնելու կանոնավորութեան տեսակետից, սահմանել արդյունաբերութեան ստորև հիշատակված ճյուղերի համար այն պարտադիր տոկոսը, վորից պակաս չի կարող լինել 15, 16 և 17 տարեկան պատանիների թիվը՝ համապատասխան ձեռնարկութեան մեջ զբաղված անձանց ընդհանուր քանակութեան համեմատութեամբ:

2. Արդյունաբերութեան այն ճյուղերը, վորոնց համար սահմանվում է պատանիների պարտադիր նվազագույն տոկոս, և այդ տոկոսի չափը յուրաքանչյուր առանձին ճյուղի համար՝ հետևյալներն են.

|   |    |      |
|---|----|------|
| ա. Մետաղագործութիւնն և մետաղի մշակութիւնն | 10 | տոկ. |
| բ. Բամբակի մշակութիւնն                    | 15 | »    |
| գ. Բրդի մշակութիւնն                       | 10 | »    |
| դ. Մետաքսի մշակութիւնն                    | 5  | »    |
| ե. Պոլիգրաֆիական արդյունաբերութիւնն       | 15 | »    |
| զ. Սղոցարաններ                            | 8  | »    |

|   |    |   |
|---|----|---|
| է. Փայտի մշակութիւն                         | 6  | » |
| ը. Յեմենտի, աղյուսի և բրբառութիւն           | 5  | » |
| թ. Կրի և ալարասարի արտադրութիւն             | 5  | » |
| ժ. Կաշեգործութիւն                           | 10 | » |
| ի. Զիասարքի արհեստանոցներ և կոշկակարանոցներ | 10 | » |
| լ. Անուշեղենի                               | 5  | » |
| խ. Ադորիքներ                                | 8  | » |
| ծ. Պահածոյի գործարաններ                     | 8  | » |
| կ. Զիթահանքեր                               | 7  | » |
| հ. Ծխախոտի և քարտիճի գործարաններ            | 5  | » |
| ձ. Կինու և կոնյակի                          | 8  | » |
| ղ. Հիմնական քիմիական արդյունաբերութիւն      | 5  | » |
| ճ. ճոթեղենի արդյունաբերութիւն               | 17 | » |
| մ. Ավառ—գարաժի արհեստանոցներ                | 10 | » |
| յ. Գյուղատնտեսական                          | 15 | » |
| ն. Հանքագործական արդյունաբերութիւն          | 10 | » |
| շ. Փոստ-հեռագիր                             | 15 | » |
| ու. Իեղագործութիւն                          | 10 | » |

3. Յերկրորդ հոդվածում հիշատակված պատանիների քանակութիւն նվազագույն չափը պարտադիր և թե պետական և թե մասնավոր ձեռնարկութիւնների համար:

4. Այն ձեռնարկութիւնները վորոնց 15, 16 և 17 տարեկան պատանի աշխատավորների քանակութիւնը պակաս և 2 հոգ. մասնանշված տղոսից, պարտավոր են մինչև 1923 թ. Փետրվարի 1-ը՝ պատանիների թիվը սահմանված քանակութիւն հասցնել:

5. Պարտադիր նվազագույն չափեր սահմանելը, ձեռնարկութիւններին չի գրկում 2 հոգ. ում սահմանված պարտադիր նվազագույն քանակութիւնիցն ավելի պատանիներ վարձելու իրաւիւնքից:

**Փառորւթիւն.**— Պատանիների քանակութիւն կրճատումներ տեղի կարող են ունենալ միայն քանվորների ընդհանուր թիվը կրճատելիս, ընդհանուր կրճատման համեմատական չափով, բայց առանց յերկրորդ հոդվածում սահմանված չափերը նվազեցնելու:

6. Անդրկովկասի Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի Հայաստանի լիազորին: իրավունք և վերապահվում է. Ա. Մ. Խ. և համապատասխան անտեսական մարմնի համաձայնութիւնը.

ա. Պարտադիր նվազագույն տղոս սահմանել տնտեսութիւն այնպիսի ճյուղերի համար, վոր նախատեսված չեն սույն վորոշմամբ:

բ. Ներկայացնել Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահութիւնը իր առաջարկութիւնները, սահմանված չափերի փոփոխութիւն մասին:

7. Սույն վորոշումը տարածվում է ամբողջ Հայաստանի վրա և պետք է հայտարարվի և կիրարկվի ձեռնարկութիւնների մեջ, վոր ուշ քան 1923 թ. Փետրվարի 1-ը:

Աշխատանքի Տեսչութիւնն և հանձնվում հսկողութիւն ունենալ սույն վորոշման գործադրութիւն վրա թե պետական և թե մասնավոր ձեռնարկութիւնների մեջ:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալ՝ Ա. Մուվյան

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի քարտուղար՝ Գ. Պարզգյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 3, № 24

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1922 թ. Դեկտեմբերի 27

Ք 13. Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւն Խորհրդի «Պատանի քանվորներին բժշկական քննութիւն յենթարկելու մասին» Նոյեմբերի 4-ի 1922 թ. վորոշումը ի գիտութիւն հանրութիւն և ի կիրարկութիւն հրապարակելու մասին:

Ընդ ամին հրապարակվում է ի գիտութիւն հանրութիւն և ի կիրարկութիւն՝ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների Միութիւն Խորհրդի 1922 թ. Նոյեմբերի 4-ի

վորոշուձը, «Պատանի բանվորներին բժշկական քննութեան յենթարկելու մասին»:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի տեղակալ՝ Ա. Մուսվյան

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի քարտուղար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 3, № 24

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Կ**

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ**

1922 թ. Նոյեմբերի 4

Պատանի բանվորներին բժշկական քննութեան յենթարկելու մասին

1. Տասն և ութից պակաս տարիք ունեցող բոլոր պատանիները, յեթե ուղարկվում են աշխատելու պետական, հասարակական և մասնավոր հիմնարկութեաններում, ձեռնարկութեաններում և անտեսութեաններում, անպատճառ պիտի յենթարկվեն բժշկական քննութեան, վոր տեղի յե ունենալու Աշխատանքի բորսայում նրանց վորպես զործագուրի ցուցակ գրելիս:

2. Պետական, հասարակական և մասնավոր հիմնարկութեաններում, ձեռնարկութեաններում և անտեսութեաններում արդեն աշխատող բոլոր պատանիները պետք է բժշկական քննութեան յենթարկվեն: Յեթե պարզվի, վոր պատանիների կատարած զործի ծանրութեանը չի համապատասխանում նրանց առողջական վիճակին, նրանց պետք է ավելի թեթե աշխատանք արվի:

Ծանոթություն. — Իննութեան պիտի յենթարկվեն և այնպատանիները՝ վորոնք սովորում են զործարանային աշակերտութեան դպրոցներում:

3. Պատանի բանվորներին բժշկական քննութեանը կատարվում է պարբերաբար, անվագն տարին մի անգամ:

4. Անդրկովկասի Աշխատանքի Կոմիսարիատի լիազորներին հանձնարարվում է պատշաճ հանրապետութեաններին Առողջապա-

հութեան ժողովրդական Կոմիսարիատներին հետ միասին՝ հրահանգներ հրատարակել սույն վորոշման կիրարկութեան համար:

Միութեան Խորհրդի Նախագահ՝ Ն. Նարիմանով  
Միութեան Խորհրդի Փոխ-Քարտուղար՝ Ուլալ—Մալախով

**Դ Ե Կ Ր Ե Տ**

**Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԻՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻ**

1923 թ. Հունվարի 30

№ 14. Հ. Ս. Խ. Հանրապետութեան զորքի մեջ ծառայելու հաստատուն ժամանակ սահմանելու նպատակով՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշեց. —

1. Անորոշ ժամանակով արձակուրդ տալ 1900 թ. ծնված կարմիր զինվորներին:

2. Հ. Ս. Խ. Հ. Ռազմական Կոմիսարին վերապահել վորոշելու, թե վոր կարգի կարմիր զինվորներին պետք է թողնել զորքի մեջ և յերբ պետք է նրանց անորոշ ժամանակով արձակուրդ արվի:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Նախագահ՝ Ս. Համբարձումյան  
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Քարտուղար՝ Հ. Տաշյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 4, № 25

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ**

1922 թ. Դեկտեմբերի 27

№ 15. Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեաններին Միութեան Խորհրդի «Շոգեկաթսանների, ջրային և ներքին այրեցումն ունեցող շարժիչների և ճնշման տակ զործող անոթների տերերից, բացի յերկաթուղիներից և նավերից, հարկ դանձե-

լու մասին» 1922 թ. Դեկտեմբերի 8-ի գեկրեար ի պատճառն հանրութեան և ի կիրարկութեան հրապարակելու մասին:

Ընդ սմին հրապարակվում և ի պատճառն հանրութեան և ի կիրարկութեան՝ Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Միութեան Խորհրդի 1922 թ. Դեկտեմբերի 8-ի գեկրեար — «Շոգեկաթսաների, ջրային և ներքին այրեցումն ունեցող շարժիչների և ճնշման տակ գործող անոթների տերերից, բացի յերկաթուղիներից և նավերից, հարկ դանձելու մասին»:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Նախագահի տեղակալ՝ Ա. Մուսվաթյան  
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի  
Քարտուղար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 6, № 26

**Դ Ե Կ Ր Ե Տ**

**ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 1922 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի**

**ՇՈԳԵԿԱԹՍԱՆԵՐԻ, ՋՐԱՅԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՅՐԵՑՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՐՃԻՉՆԵՐԻ ՅԵՎ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ ԳՈՐԾՈՂ ԱՆՈՒՅՆԵՐԻ ՏԵՐԵՐԻՑ, ԲԱՑԻ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻՑ ՅԵՎ ՆԱՎԵՐԻՑ, ՀԱՐԿ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. Աչքի առաջ ունենալով կաթսաների վրա հսկելու գործի վորդալի վիճակը՝ Անդրկովկասում, Ա. Ս. Խ. Ն. Միութեան Խորհուրդը վորպես ժամանակավոր միջոց՝ հարկ և սահմանում շոգեկաթսաների, ջրային և ներքին այրեցումն ունեցող շարժիչների և ճնշման տակ գործող անոթների համար:

2. Հարկն առնվում է ամեն մի կաթսայից առանձին, նրա շեռուցվող տարածութեան հաշվով, հետևյալ չափերով

| №  | Կաթսայի շեռուցվող տարածութեան   | Տուրքը վոսկի ուղբի-ներով և կոպեկներով |
|----|---|---------------------------------------|
| 1. | Մինչև 200 ֆուտ ամեն մի քառակուսի ֆուտի համար  | 9 կոպեկ                               |
| 2. | Մինչև 1000 ֆուտ առաջին 200 ֆուտի համար<br>200 ֆ. ավելի ամեն մի քառակուսի ֆ.-ի համար մինչև 1000 ֆ. | 18 ուղբի<br>6 կոպեկ                   |
| 3. | 1000 ֆ.-ից ավելի, առաջին 1000 ֆ. համար:<br>1000-ից ավելի ամեն մի քառակուսի ֆ.-ի համար.            | 66 ուղբի<br>3 կոպեկ                   |

3. Ջրային և ներքին այրեցումն ունեցող շարժիչների համար հարկը պետք է հաշվել նրանց ուլթերի թվի համեմատ:

| №  | Ուլթերի թիվը   | Տուրքը վոսկի ուղբի-ներով և կոպեկներով, մեկ ուլթի համար |
|----|--|--|
| 1. | Մինչև 25 ուլթ, ամեն մի ուլթի համար<br>25 ուլթի համար | 1 ուղբի<br>25 ուղբի                                    |
| 2. | 25-ից մինչև 50 ուլթ<br>50 ուլթի համար                | 80-ական կոպեկ<br>$25 + (80 \times 25) = 45$ ո.         |
| 3. | 50-ից մինչև 75 ուլթ<br>75 ուլթի համար                | 60-ական կոպեկ<br>$45 + (60 \times 25) = 60$ ո.         |
| 4. | 75-ից մինչև 100 ուլթ<br>100 ուլթի համար              | 40-ական կոպեկ<br>$60 + (40 \times 25) = 70$ ո.         |
| 5. | 100-ից ավելի<br>100 ուլթի համար $+ \times$ ուլթ      | 30-ական կոպեկ<br>$70 + 30 \times$ .                    |

1. Տուրքի չափը հաշվել վոսկի ուղբու ընթացիկ տարվա կուրսով և տուրքը դնել ավանդ՝ Անդրկովկասի Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարի համապատասխան Հանրապետութեան լիազորի անունով:

5. Լիշյալ գումարները մուծվում են Աշխատանքի պաշտպանութեան հանրապետական բաժինը, գրվում են վորպես Անդրկովկասյան Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարի լիազորի Աշխատանքի պաշտպանութեան բաժնի հատուկ գումարներ, և կարող են ծախսը-

վել բացառապես կաթսաների հսկողութեան և ապահովութեան տեսի-  
նիկայի գործի համար:

Ծանոթություն.— Աշխատանքի պաշտպանութեան հանրապետական  
բաժինը առա տուկոս մասնադրում և Աշխատանքի պաշտպանութեան  
Կենտրոնական բաժնին, նույն նպատակների համար:

6. Տուրքը ժամանակին չվճարելու պարագային, վերադիր տու-  
գանք և սահմանվում ամսական 10 տուկոսի չափով:

7. Մի քանի ամսվան ընթացքում չվճարված տուրքը պիտի  
պահանջվի ժողովրդական գատարանի միջոցով:

8. Անդրկովկասի Աշխատանքի ժողովրդական կոմիտարիատին  
հանձնարարվում և մանրամասն կանոններ մշակել հարկը դանձելու  
համար և հրատարակել, սույն դեկրետը հրապարակելուց հետո վոչ  
ուշ քան յերկու շաբաթվան ընթացքում:

9. Հիշյալ հարկը շոգեկաթսաների, ջրային և ներքին այրե-  
ցումն ունեցող շարժիչների և ճնշման տակ գործող անոթների հա-  
մար զանձվելու յե 1923 թ. Հունվարի 1-ից:

Ժամանակավոր պաշտոնակատար Միութեան  
Խորհրդի նախագահի՝ Բալասով

Միութեան Խորհրդի փոխ-քարտուղար՝ Ուլով-Մալախով

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

№ 16. ՀԱՇՏԱՐԱՐ ԱՅՅԱՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ

1923 թ. Հունվարի 17

Պետական և մասնավոր ձեռնարկութեանները ու հիմնարկու-  
թեանների վարչութեանների և մյուս կողմից բանվորների և ծա-  
ռայողների միջև Հ. Ա. Խ. Հանրապետութեան մեջ ծագող կոն-  
ֆլիկտաների միտքինակ հաշտարար քննութեան սահմանելու նպատա-  
կով Աշխատանքի ժողովրդական կոմիտարիատի մարմիններին ա-  
ռնթեր կազմակերպվում են հաշտարար ատյաններ և միջնորդ  
գատարաններ:

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՏԱՐԱՐ ԱՅՅԱՆՆԵՐԻ ՅԵՎ  
ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ**

1. Հաշտարար ատյաններին ու մեջնորդ գատարաններին յեն-  
թակա յեն.

ա) կողմերի միջև հավաքական պայմանագրեր և տարիֆային  
համաձայնութեաններ կնքելու, գործադրելու, մեկնաբանելու և  
փոփոխելու վերաբերմամբ ծագող վեճերը:

բ) Անհատական աշխատավորական պայմանագրերի վերաբեր-  
մամբ կողմերի միջև ծագող վեճերը:

գ) Բոլոր այն կոնֆլիկտները, վոր չի կարելի լուծել քրեական  
կարգով:

2. Գործերը հանձնվում են հաշտարար ատյաններին յերկու  
կողմերի համաձայնութեամբ:

Հավաքական պայմանագրերը կյանքում կիրարկելու հետ կապ-  
ված գործերը ընդունվում են հաշտարար ատյաններում միայն  
այն դեպքում, յերբ նրանք քննվել են և չեն լուծվել զնահատիչ-  
կոնֆլիկտային հանձնաժողովում:

3. Աշխատանքի ժողովրդական կոմիտարիատի մարմիններին  
կողմերի ներկայացրած հայտարարութեամբ, յուրաքանչյուր դեպքում  
ընտրվում են հաշտարար ատյաններ, վիճող կողմերի հավասար  
թվով ներկայացուցիչներից բաղկացած և Աշխժողկոմի մարմնի նը-  
շանակած անձի նախագահութեամբ:

4. Հաշտարար ատյանի նախագահը, չունենալով վճռող ձայն,  
նպաստում և հաշտարար համաձայնութեան կայանալուն, հետևում  
և վոր վիճելի հարցերը լուծվին աշխատանքի վերաբերյալ գործող  
որենքների համաձայն:

5. Յեթե հաշտարար ատյանում վեճի քննութեան ժամանակ  
յերևան գան քրեական պատժի յենթակա արարքների նշաններ,  
վոր կապ ունեն աշխատանքի վերաբերյալ որենքների խախտման  
հետ, գործի այդ մասն անջատվում և և անհապաղ ուղարկվում  
Աշխժողկոմի մարմնի միջոցով համապատասխան ժողովրդական գա-  
տարանին:

6. Հաշտարար ատյանները վճիռները կայացնում են միայն  
կողմերի համաձայնութեան կարգով: Գլուխ յեկած ու նախագահի  
և յերկու կողմերի ստորագրած համաձայնութեանը պարտադիր և

կողմերի համար և բողոքարկելի չեն:

Հաշտարար ատյանների համաձայնութեանները կյանքում իրա-  
դրծվում են վճռող կողմերի ձեռքով. այդ համաձայնութեանների  
խախտման դեպքում կողմերը պատասխանում են վորպես պայմա-  
նագրի խախտողներ:

8. Հաշտարար ատյաններում լուծում չստացող գործերը փո-  
խադարձ համաձայնութեամբ կարող են հանձնվել միջնորդ դատա-  
րանին:

9. կողմերի համաձայնութեամբ գործը կարելի է հանձնել նաև  
անմիջապես միջնորդ դատարանին, առանց հաշտարար ատյանին դի-  
մելու:

10. Վիճելի դործը միջնորդ դատարանի (հանձնելու մասին կող-  
մերը կայացնում են առանձին համաձայնութեան (միջնորդ գրու-  
թյուն), պարտավորվելով յենթարկվել միջնորդ դատարանի վորոշ-  
մանը: Միջնորդ գրութեանը ներկայացվում է Աշխտողկոմի պատ-  
շած մարմիններին:

11. Պետական մարմինների և արհեստակցական միութեան-  
ների միջև հավաքական պայմանագիր կնքելու խնդրի վերաբերմամբ  
ծագած և տեղական հաշտարար ատյանում չլուծված տարածայ-  
նութեանները, կողմերից վորեէ մեկի յեզրակացութեան համաձայն,  
կարող են սրվել Աշխտողկոմի մարմինների ձեռքով միջնորդ դա-  
տարանին ի լուծումն:

12. Միջնորդ դատարանը բաղկանում է կողմերի համաձայ-  
նութեամբ ընտրված նախագահից և կողմերի հավասար թվով ներ-  
կայացուցիչներից:

Յեթե նախագահ ընտրելու հարցում համաձայնութեան չի կա-  
յանում, այդպիսին նշանակվում է Աշխտողկոմի մարմնի կողմից:  
Միջնորդ դատարանի նախագահն ունի վճռող ձայնի իրավունք:

13. Միջնորդ դատարանների վճիռները վերջնական են և չեն  
կարող բողոքարկվել: Յեթե կողմերից մեկը հրաժարվում է կատա-  
րել վճիռը, Աշխտողկոմատի մարմիններն այդ վճիռները հանձնում  
են ժողովրդական դատարանին: Վերջինը 24 ժամվա ընթացքում  
մակազրում է, վոր վճիռը ի կատար ածվի ստիպողական կարգով:

14. Թե հաշտարար ատյանների համաձայնութեանների և թե  
միջնորդ դատարանի վճիռների այն կետերը, վոր հակասում են  
արենքներին, անվավեր են: Այդ մասին Աշխտողկոմի մարմինները

գրավոր հայանում են կողմերին, մասնանշելով որենքների կետերը  
և առաջարկելով նորից քննել վիճելի կետերը հաշտանար ատյանում  
կամ միջնորդ դատարանում, նույն կամ այլ կազմով, բոտ կողմե-  
րի ցանկութեան:

15. Հաշտարար ատյաններ ու միջնորդ դատարաններ, համա-  
պատասխան ծագած վեճերի վայրին՝ կազմակերպվում են համա-  
պետական լրագրների Վարչութեանների աշխատանքի դավթածին-  
ներին առնթեր:

16. Հաշտարար ատյանների և միջնորդ դատարանների անձ-  
նական կազմը պահպանվում է Աշխատանքի ժողովրդական կոմի-  
սարիատի նախահաշվի միջոցներով:

17. Սույն կոնոնադրութեանը հրապարակելուց հետո վերաց-  
վում են այս հարցի վերաբերյալ բոլոր ցարդ հրատարակված  
որենքները:

Ժողովրդական կոմիսարների Սորհրդի նախագահ՝  
Ս. Սրապիոնյան (Լուկաեին)  
Ժողովրդական կոմիսարների Սորհրդի Բարտուղար՝  
Գ. Պարզյան

Հր. «Սորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 6. № 26

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

17. Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
1923 թ. Հունվարի 16

Անդրկովկասի Սոցիալիստական Սորհրդային Հանրապետու-  
թեանների Միութեան Սորհրդի «Աշխատանքի Որենագրքի մասին»  
1922 թ. Դեկտեմբերի 30-ի վորոշումը ի գիտութեան հանրութեան  
և ի կիրարկութեան՝ հրապարակելու մասին:

Ընդ սմին հրապարակվում է ի գիտութեան հանրութեան և ի  
կիրարկութեան՝ Անդրկովկասի Սոցիալիստական Սորհրդային Հան-  
րապետութեանների Միութեան Սորհրդի 1922 թ. Դեկտեմբերի

31-ի վորոշումը՝ «Աշխատանքի Որենսգրքի մասին»  
 Ժողովրդական Կոմիտեաների Խորհրդի նախագահի  
 տեղակալ՝ Ա. Մուսվյան  
 Ժողովրդական Կոմիտեաների Խորհրդի քարտուղար՝  
 Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
 1923 թ. Փետրվարի 7, № 27

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1922 թ. Դեկտեմբերի 30

1. 1923 թ. Հունվարի 1-ին Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետության  
 Խորհուրդների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
 հաստատած Աշխատանքի Որենսգրքի ուժը տարածվում է ամբողջ  
 Անդրկովկասի վրա:

Աշխատանքի Որենսգրքին հակասող ցարդ հրատարակված բո-  
 լոր վորոշումները չնշվում են:

2. Հանձնարարվում է Աշխատանքի Ժողովրդական Կոմիտեին՝  
 ամենակարճ ժամանակում փերկայացնել Միության Խորհրդին հրա-  
 պարակելու համար աշխատանքի վերաբերյալ այն բոլոր որենքների  
 ցուցակը, ինչ պահում են իրենց ուշժր, Աշխատանքի Որենսգրքը  
 կիրարկության մեջ դնելուց հետո:

Անդրկովկասի Ս. Խ. Հանրապետությունների  
 Միության Խորհրդի նախագահ՝ Շ. Եվսևիա  
 Միության Խորհրդի փոխ. քարտուղար՝  
 Ուլուխ-Մալախով

**ԿԱՆՈՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

№ 18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎՅԱԼՆԵՐԻ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁ-  
 ՆԱԺՈՂՈՎԻ

1923 թ. Հունվարի 30

1. Ավերված անտեսությունները վերականգնելուն նպաստելու  
 և բնակչության չքավոր մասին, մանավանդ անխնամ յերեխանե-

րին ոգնություն հասցնելու նպատակով Հայաստանի Կենտրոնական  
 Գործադիր Կոմիտեին առնթվեր գոյություն ունեցող Սովյախների  
 Ոգնության Կենտրոնական Հանձնաժողովի վրա դրվում են հետևյալ  
 պարտականությունները:

ա) Ղեկավարել, համաձայնեցնել և միացնել այն ժողովրդական  
 Կոմիտեիատներին, Խորհրդային հիմնարկություններին և բոլոր հասա-  
 րակական կազմակերպությունների գործունեությունը, ինչ աշխա-  
 տում են սովի և նրա հետևանքների դեմ պայքարելու գործում,  
 այլ և քննել ու հաստատել նրանց գործառնությունների ծրագիր-  
 ները:

բ) Նպաստել հանրային աշխատանքներ կազմակերպելուն այն  
 վայրերում, ինչ կարևորագույն գյուղատնտեսական նշանակություն  
 ունին և ուր բնակչությունը խիստ կարոտյալ վիճակի մեջ է:

գ) Վորոշել ոգնության կարոտ, անտեսությունից զրկվածնե-  
 րի, աղատյալ բանվորների, վորը յերեխաների, պատերազմի, աշ-  
 խատանքի կամ սովի հետևանքով ինվալիդ դարձածների թիվը:

դ) Բաժին հանել յուր նյութական միջոցներից մանկական  
 հիմնարկություններին, մանուկների անխնամության դեմ պայքարե-  
 լու, ինվալիդների հիմնարկություններին համար:

ե) Աջակցել փախստականների, անտեսությունից զրկվածների  
 ավերված գյուղական անտեսությունը վերականգնելուն՝ նպաստա-  
 վոր պայմաններով սերմացու, լծկան, արտադրության գործիքներ,  
 դրամ և այլն մատակարարելով:

զ) Սովյախների Ոգնության Կենտրոնական Յանձնաժողովի նա-  
 խագահն և Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նա-  
 խագահը, ինչ ունի յերկու տեղակալ, իսկ անպամներն են Հողային,  
 Պարենավորման, Լուսավորության, Սոցիալական ապահովության,  
 Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեիատների, Արհմիություն-  
 ների Խորհրդի, Հայաստանի Կարմիր Խաչի և Հայաստանի Ոգնու-  
 թյան Կոմիտեի պատասխանատու ներկայացուցիչները:

3. Սովյախների Ոգնության Կենտրոնական Հանձնաժողովի նիս-  
 տերը գումարվում են ամիսը առնվազն յերեք անգամ:

4. Սովյախների Ոգնության Կենտրոնական Հանձնաժողովի բո-  
 լոր վորոշումները ինչ արվում են ժողովրդական Կոմիտեիատներին  
 համաձայնությունը, համարվում են վերջնական և անհապաղ ի կա-  
 տար են անվում, իսկ այն վորոշումները, ինչոնց վերաբերությունը

անհամաձայնութիւն կա, հանձնվում են կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահութեանն՝ ի շուտափութ քննութիւն:

5. Բոլոր ժողովրդական Կոմիտեի անդամներն ու հիմնարկութիւնները Սովյախների Ոգնութեան կենտրոնական Հանձնաժողովի պահանջած սեղեկութիւնները, պատասխանները կային պարտաւոր են տալ 48 ժամվա ընթացքում:

6. Սովյախների Ոգնութեան կենտրոնական Հանձնաժողովի միջոցները զոյանում են պետական ֆոնտերից, վոր հատկացվում են սովյախների ոգնութեան, հարկերից ու տուրքերից, այլ և հոմարակամ նմիրարերութիւններից, վոր կարող են արվել թե յերկրի մեջ և թե արտասահմանում:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Նախագահ՝ Ս. Համբարձումյան  
Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Քարտուղար՝ Կ. Տառյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 7, № 27

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
№ 19. ԲՈԼՈՐ ԱՐԳԵԼԱՏՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻՍՏԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԿԵՆՏՐՈՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

1923 թ. Հունվարի 11

Ժողովրդական Կոմիտեի անդամները, Հայաստանի Հանրապետական բոլոր արգելափայրերը Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեի անդամներին տակ կենտրոնացնելու նպատակով վորոշեց.

1. Բոլոր արգելափայրերը և նրանց կառավարութիւնը հանձնել Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեի անդամներին:
2. Բոլոր արգելափայրերի կառավարութեան և պատժական միջոցների գործադրութեանը միութիւն տալու համար, Արգարագատութեան Ժողովրդական Կոմիտեի անդամներն ուղղիչ աշխատանքի բաժինը վերակազմել և գարձնել Արգելափայրերի զգեստաւոր վարչութիւն և

վարչութեան տեղական գաղառական բաժիններ՝ Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեի անդամներին և Գաղառական կոմիտեի անդամներին առնթեր:

3. Արգարագատութեան Ժողովրդական Կոմիտեի անդամներին վերապահվում են գատախաղական հսկողութեան բոլոր իրավունքները, կալանավորներին բոլոր արգելափայրերում ըստ որինի պահելու վերահասութիւն անելու այն սահմաններում, վոր նախատեսված են գատախաղական կանոնադրութեամբ և քրեական գատախարութեան որենքներով:

4. Հանձնարարել Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեի անդամներին՝ մշակել Արգարագատութեան Ժողովրդական Կոմիտեի անդամներին հետախուզիչ և ներկայացնել նախագծեր, Հ. Ա. Խ. Հ. արգելափայրերի ընդհանուր կանոնադրութիւն, Ներքին Գործերի Ժողովրդական արգելափայրերի կենտրոնական վարչութեան և գաղառական բաժիններին և բաշխիչ հանձնաժողովի կազմակերպութեամբ:

Ժողովրդական Կոմիտեի անդամներին Խորհրդի  
Նախագահի տեղակալ՝ Ա. Մառտիկան  
Ժողովրդական Կոմիտեի անդամներին Խորհրդի  
Քարտուղար՝ Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 8, № 28

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հ. Ա. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
1923 թ. Փետրվարի 7

№ 20. Անդրկովկասի Ծ. Ա. Խ. Հ. Միութեան Խորհրդի «Աշխատանքի վերաբերյալ որենքները տանն աշխատող բանվորների վրա տարածելու մասին» 1923 թ. Հունվարի 10-ի վորոշումը ի գիտութիւն հանրութեան և ի կիրարկութեան հրատարակելու մասին:

Ընդ սմին հրատարակվում է ի գիտութիւն հանրութեան և ի կիրարկութեան՝ Անդրկովկասի Ծ. Ա. Խ. Հ. Միութեան Խորհրդի 1923 թ. Հունվարի 10-ի վորոշումը՝ «Աշխատանքի վերաբերյալ ու»

ընենքները տանն աշխատող բանվորների վրա տարածելու մասին»:

Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի  
Նախագահ՝ Ս. Սրապիոնյան (Լուկաեի)

Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի  
Քարտուղար՝ Գ. Պարվյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 17, № 33

**Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ Ֆ. Ս. Խ. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

10-ն Հունվարի 1923 թ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԵՆՔՆԵՐԸ ՏԱՆՆ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ  
ՎՐԱ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի նկատի ունենալով, Վոր անում է տանը կատարելու համար գործ տալու յերևույթը, Վոր աշխատանքի ծայրահեղ շահագործումն է առաջ բերում, Միության Խորհուրդը ի գորգացումն աշխատանքի վերաբերյալ որենքների, Վորոշեց.

1. Աշխատանքի վերաբերյալ որենքները տարածել տանն անու գործ ստացող բանվորների վրա:
2. Բոլոր պետական, զինվորական, կոնցեսիոն և մասնավոր ձեռնարկությունները, Վոր գործ են տալիս տանն անելու, պարտավոր են տուժարագրելու աշխատավորներին, Աշխատանքի ժողովրդական կոմիտեաների մարմիններում և յուրաքանչյուր տանն աշխատողին տալ սահմանված ձևի հաշվեգրքույկ, Վորի մեջ բացի ընդհանուր արձագրությունից՝ պիտի նշանակվի ամսաթիվը, թե յերբ և տված գործը, պատրաստվելիք առարկաների քանակությունը, տված առարկաների քանակությունն ու ժամանակը:
3. Այն անձերը, ձեռնարկություններն ու հիմնարկությունները Վոր տանն անելու գործ են բաժանում միջնորդների ձեռքով, նույն պարտականություններն ունին բանվորների նկատմամբ, ինչ Վոր գործն անմիջապես բանվորներին բաժանելիս. այս պատասխանավորությունից չեն ազատվում նաև միջնորդներն իրենք:

Փաճորայրյուն. Իրենց անձնական գործածության համար տանը կատարելու պատվեր տվողները վարձակալ չեն համարվում:

4. Վարձակալը պարտավոր է տանն աշխատող բանվորին ութ-ժամյա ամբողջ որվա գործ տալ: Գործատուի շնորհիվ կորցրած աշխատանքի ժամանակը վարձատրվում է տվյալ բանվորի լրիվ աշխատավարձի հաշվով:

5. Տանն աշխատողի աշխատավարձը տվյալ վայրի համար սահմանված աշխատավարձի նվազագույն չափից պակաս չի կարող լինել:

6. Գործատուն պարտավոր է Սոցիալական ապահովության տուրքերը վճարել, արդյունաբերության տվյալ ճյուղի համար սահմանված չափով:

7. Տանն աշխատողների ընդունելությունն ու արձակուրդ տեղի յե ունենում նույն հիմունքներով, ինչ Վոր ձեռնարկությունների մեջ աշխատող բանվորներինն է:

8. Սույն Վորոշումը խախտողները յենթակա յեն պատասխանատվության՝ Վորպես աշխատանքի վերաբերյալ որենքները խախտողներ:

9. Սույն Վորոշման անշեղ կատարման հսկողությունը դրվում է Աշխատանքի ժողովրդական կոմիտեաների մարմինների վրա: Անդրկովկասի Աշխատանքի ժողովրդական կոմիտեաները յեթիք որվա ընթացքում պիտի մշակե տանն աշխատող բանվորների տուժարագրության ձևը:

10. Սույն Վորոշումը գործադրելի յե հրապարակվելու որից:

Միության Խորհրդի նախագահ՝ Ելիավա

Միության Խորհրդի քարտուղար՝ Ուլով-Մալախով

**Դ Ե Կ Ր Ե Տ**

Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

№ 21. ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1923 թ. Փետրվարի 7,

1. Հ. Ս. Խ. Հ. բոլոր քաղաքներում, ավաններում, գյուղերում և այլ մարդաբնակ վայրերում մտցնել, ըստ զնահատության և ըստ հայտնի արժեքի, գույքի պետական ապահովագրություն կրա-

կից, կարկտահարութիւնից, կենդանիների համաճարակից և այլն, այլ և հոժարակամ ապահովագրութեան ընդ որ տեսակները:

Ծանօթութիւն. — ա) Նախ մտցնվում են հոժարակամ ապահովագրութեան ընդ որ տեսակները, ըստ հայտնի արժեքի պարտադիր ապահովագրութեան կրակից, և ըստ գնահատութեան պարտադիր ապահովագրութեան՝ կարկտահարութեանից:

բ) Ապա մտցնվում և ըստ գնահատութեան պարտադիր ապահովագրութեան, կենդանիների համաճարակից:

գ) Հ. Ս. Խ. Հ. պետական ապահովագրութեան գործի զարգացման պարագային, պետական ապահովագրութեան գլխահնչակը հատուկ զիմումն և անում ժողկոմների Խորհրդին, կրակից ըստ գնահատութեան պարտադիր ապահովագրութեան մտցնելու մասին:

2. Պարտադիր ապահովագրութեան մտցնելու ժամանակը, այլ և գնահատութեան չափերը սահմանվում են Պետական. Ապահովագրութեան Վարչութեան և Անդրկովկասի Ֆինժողկոմի Հ. Ս. Խ. Հ. լիազորի համաձայնութեամբ և հրապարակվում են ի գիտութեան հանրութեան և ի կատարումն, վերջին պարտադիր վորոշումներով:

3. Առաջին հոդվածում հիշատակված գործառնութիւնները մշտցնելու համար, Պետական Ապահովագրական վարչութեանը կողմակերպում է Հ. Ս. Խ. Հ. Պետական Ապահովագրութեան Գրասենյակ Յերևան քաղաքում ու Հայաստանի մնացյալ մարզաբնակ վայրերում գավառական և շրջանային գործակալութիւնները, Անդրկովկասի Պետական ապահովագրութեան Վարչութեան գիտութեամբ:

4. Ապահովագրական գործառնութիւններն ու նրանց վերաբերյալ հաշվետվութիւնը Հ. Ս. Խ. Հ. սահմաններում կատարվում է Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Ֆինանսների Ժողովրդական կոմիտարիատի հաստատած կանոնների հիման վրա:

Ժողկոմխորհի նախագահ՝

Ս. Մրապիոնյան (Լուկաշին)

Ժողկոմխորհի Բարտուղար՝

Գ. Պարզյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 թ. Փետրվարի 17, № 33

### Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

#### Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ

1923 թ. Փետրվարի 13,

№ 22. Համառուտական Կենտրոնական Գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիտարների Խորհրդի 1922 թ. Սեպտեմբերի 28-ի «Պարտադիր զինվորագրութեան վերաբերյալ» ղեկընտը Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան վրա տարածելու մասին:

Հ. Ս. Խ. Հանրապետութեան Կենտրոնական Գործադիր կոմիտեն վորոշեց.

Համառուտական Կենտրոնական Գործադիր կոմիտեի և Ժողովրդական կոմիտարների Խորհրդի 1922 թ. Սեպտեմբերի 28-ի ղեկընտը՝ «Պարտադիր զինվորագրութեան մասին» տարածել Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան վրա:

Կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ՝

Ս. Կարյոնյան

Կենտրոնական Գործադիր կոմիտեի Բարտուղար՝

Հ. Տառյան

Հր. «Խորհրդային Հայաստան»  
1923 Փետրվարի 28, № 41

### Դ Ե Կ Ր Ե Տ

#### ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Ընդունելով, վոր ժամանակ է Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետութեան քաղաքացիների զինվորական ծառայութեան հաստատուն հիմքեր սահմանելու, Համառուտական Կենտրոնական Գործադիր կոմիտեն և Ժողովրդական կոմիտարների Խորհուրդը վորոշեցին.

1. Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. արական սեռի բոլոր քաղաքացիները, անկախ իրենց բնակատեղից, կոչվում են պարտադիր զինվորական ծառայութեան կարմիր Բանակի և կարմիր Նավատորմի մեջ Հան-

բաղադրուած թիւնն պաշտպանութեան համար: Կարմիր բանակի և Կարմիր Նավատորմի մեջ չեն կարող ընդունուիլ այն անձերը, վոր գատական վճռով զրկուած են ընտրելու և ընտրվելու իրավունքից:

Ծանօթ.— Այն անձերը, վորոնց վորոշ գատակարգի պատկանելու կամ Սորհրդային Իշխանութեան դեմ արտահայտած սկսով թշնամութեան պատճառով չի կարելի վատանել Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. զինյալ պաշտպանութեանը, զինվորական ծառայութեան և կոչվում ստանձին կարգով:

2. Իսկական զինվորական ծառայութեան կոչելը Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հատուկ վորոշմամբ կարող և հետաձգվել Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. այն ազգութեանների համար, վոր իրենց կուլտուրական և կենցաղական առանձնահատկութեանների շնորհիվ չեն կարող միանգամայն պիտանի զինվորներ տալ Բանվորա-դեղագոյական Կարմիր Բանակի համար:

Զինվորագրութեանը կարող և ժամանակավորապես հետաձգվել նաև այն զինապարանների համար, վորոնք հասունացած չեն, հիվանդ են կամ գեռ իրենց ուսումը պիտի ավարտեն:

3. Կարմիր Բանակի և Նավատորմի շարքում իսկական զինվորական ծառայութեան ժամանակը վորոշվում է՝

ա) Հետևակ և Թնդանութեամբի գործի և ամեն տեսակ զորամասերի ու հիմնարկութեանների համար, բացի ստորև հիշատակված զորամասերից, 1 և կես տարի:

բ) Հեծելազորի, հեծյալ Թնդանութեամբի և տեխնիքական գործի համար՝ 2 և կես տարի:

գ) Ողային Նավատորմի համար՝ 3 և կես տարի:

դ) Ծովային Նավատորմի համար՝ 4 և կես տարի:

ե) Զինվորական և զինվորածովային ուսումնարանների համար — այդ հաստատութեանների կանոնադրութեանները համաձայն:

Հիշյալ ժամանակները ծառայելուց հետո, յուրաքանչյուր զինվորական ծառայող անորոշ ժամանակով արձակուրդ և ստանում և զրվում է բանակի և Նավատորմի պահեստի զինվոր և պահեստից իսկական ծառայութեան և կոչվում, բանակի պատերազմական վիճակի մեջ զրվելու պարագայում:

Զորքի պահեստում զինապարանները մնում են մինչև իրենց 40 տարեկան հասակը: 40 տարին լրանալուց հետո, պահեստի զինվորները հանվում են զինապարանների ցանկից և բանակի շարքերը կարող

են կոչվել միայն ծայրայեղ անհրաժեշտութեան դեպքում, Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեի հատուկ վորոշմամբ:

Պատերազմ հայտարարելու դեպքում, բոլոր իսկական զինվորական ծառայութեան մեջ գտնվողները պահվում են բանակի և Նավատորմի մեջ մինչև զորացումը:

Մինչև Կարմիր Բանակի և Նավատորմի վերջնականապես սույն վորոշմամբ սահմանված ծառայութեան ժամանակներին անցնելը, վորոշ կատեգորիաների և հասակի կարմիր զինվորներ և կարմիր նավատիներ, Հանրապետութեան հեղափոխական զինվորական Սորհրդի կարգադրութեամբ կարող են պահվել բանակի և Նավատորմի մեջ, հիշյալ ժամանակներին ել ավելի:

4. Կարմիր Բանակը և Կարմիր Նավատորմը լրացնել յուրաքանչյուր տարի, պարտադիր զինվորական ծառայութեան կոչելով մի հասակի զինապարաններին, վորոնց 20 տարին լրացած կլինի զինվորակոչի տարվա Հունվարի 1-ին:

Հերթական հասակի զինվորակոչը, վոր հայտարարվում է ժողովրդական Կոմիտարների ղեկընտով, տեղի պիտի ունենա ամեն տարի գարնանը, փետրվար և մարտ ամիսների ընթացքում. ճիշտ ժամանակը առանձին վայրերի համար՝ սահմանվում է Հանրապետութեան Հեղափոխական զինվորական Սորհրդի, Ներքին գործերի և Հողագործութեան ժողովրդական Կոմիտարիատների համաձայնութեամբ:

Պարտադիր զինվորական ծառայութեան սկզբնական ժամանակակետը բոլոր զինվորութեան կոչվածների համար՝ հաշվել ապրիլի 1-ից:

Բանակի և Նավատորմի պահեստի զինվոր զրվելու յենթակա կարմիր զինվորներին և զինվորական նավատիներին անորոշ ժամանակով արձակուրդ տալը տեղի պիտի ունենա յուրաքանչյուր տարի աշնանը՝ ամառնային բանակաժողովից և նավավարութեանից հետո, Հանրապետութեան Հեղափոխական զինվորական Սորհրդին իրավունք վերապահելով ժամանակից անաջ արձակելու, թե կարմիր զինվորների ամբողջ խմբերի, ուսուցումը վերջանալու պատճառով, և թե առանձին կարմիր զինվորների, վոր հատուկ հաջողութեամբ ավարտած կլինին իրենց ուսումը:

5. Զորակոչի պարտավոր են դալ բոլոր զինվորութեան տարիքի հասածները, բացի իրենց կրթութեանն ավարտելու համար հետա-

ձգում ստացողներից: Բժշկական քննութեամբ բոլոր պիտանի ճանաչվածները համարվում են զինվորական ծառայութեան մեջ ընդունված: Սակայն նրանց մի մասին կարող են արտոնութեաններ շնորհվել իրենց ընտանեկան և անտեսական վիճակին ի նկատի ունենալով: Այն քաղաքացիները, ժորոնց աչքպիսի արտոնութեաններ են շնորհված, մտնում են զորքի մեջ ամեն տարի Ոգոստոսի 15-ից մինչև Սեպտեմբերի 15-ը տեղ ժամանակի ընթացքում և պարտադիր ծառայութեանը ծառայում են կրճատ ժամանակ՝ վեց ամիս, վորի սկզբնակետը հաշվվում է Հոկտեմբերի մեկից:

Տվյալ գավառից զորքի մեջ ուղարկվելի քաղաքացիների թվի սահմաններում, Սորհուրդների շինական համադումարներն են վորոշում, թե վորոնք են ընդունված դարնանը կամ աշխանը զորքի մեջ մանկու համար, միայն անպատճառ այն պայմանով, վոր յերկրորդ կամրի մեջ մտածվեն ամենից տուաջ արտոնութեան իրավունք վայելողները:

Պատերազմի ժամանակ վոր մի արտոնութեան չի շնորհվում:

Շանքարթլու.— Ընտանեկան և անտեսական վիճակի համեմատ արտոնութեաններ շնորհելու կարգի մասին կանոններ պիտի հրատարակվին առանձին:

6. Պարտադիր զինվորական ծառայութեան կոչվող քաղաքացիների հետ միասին կարմիր Բանակի և կարմիր Նավատորմի մեջ ընդունվում են կամավորներ, Հանրապետութեան Հեղափոխական զինվորական Սորհրդի աչք մասին սահմանած առանձին կանոնների համաձայն:

Կամավոր կարող են ընդունվել նաև ոտար յերկրյա քաղաքացիներ, վոր ցանկութեան կրհայանեն ծառայելու Ռուսաց զորքի մեջ և մասնակցելու Ռուսական հեղափոխութեան նվաճումների պաշտպանութեան:

7. Իսկական զինվորական ծառայութեան մեջ զանվորները վայելում են Ռ. Ս. Յ. Ս. Հ. քաղաքացիների բոլոր իրավունքները՝ միաժամանակ յենթադիվելով զինվորական ծառայութեան բոլոր պահանջներին և կանոններին:

Բանակի և նավատորմի պահեստում գտնվող զինապարտները յենթարկվում են հաշվառութեան, ծառայութեան և պահեստի համար հատկապես սահմանված կանոններին և մասնավորապես պարտավոր են ներկայանալ Ռազմական Կոմիտարիատներին, պարբերա-

կան մորզանքների համար և փորձնական զորածողով հայտարարելիս:

8. Կարմիր Բանակի և կարմիր Նավատորմի շաբբերը կոչվածների անապահով ընտանիքները ոժանդակութեան են ստանում պետութեանից, առանձին հրահանգների համաձայն:

9. Զինապարտների խուսափումը հաշվառութեանից և զինվորադրութեանից՝ պատժվում է քրեական որենքներով սահմանված կարգով:

10. Սույն ղեկրեսը տարածվում է բոլոր զաշնակից Սորհրդային Հանրապետութեանների վրա:

Համառուսական Կենտրործկոմի նախագահ՝ Մ. Կալինին  
 Ժողկոմխորհի փոխ-նախագահ՝ Մ. Ռիկով  
 Ի ա. Համառուսական Կենտրործկոմի  
 քարտուղարի՝ Տ. Սապրոնով

28 Սեպտեմբերի 1922 թ.  
 Մոսկվա, Կրեմլ



